ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

«ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով բաց մրցույթով
Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների ձեռքբերման հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան
Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 17.07.2018թ. ժամը 15.00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	ԳՊ/ԳԱՊ/	Գ. Խաչատրյանը
Անդամներ՝	ԳՊ/ԳԱ/	Լ. Ոսկանյանը
		Հ. Հարությունյանը
	ԳՊ/ԲԱ/՝	Ս. Պետրոսյանը
		Ս. Դավթյանը
Հանձնաժողովի քարտուղար՝	ԳՊ/ՄՀմ	Մ. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 10.07.2018-ին հարցում է ուղարկվել «ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով բաց մրցույթի առաջին տեղը զբաղեցրած «Պրոթերմ» ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար «ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով հրավերով /Հրավեր/ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

1.2 Գնահատող հանձնաժողովի 06.07.2018թ. և 10.07.2018թ. թիվ 3 որոշմամբ և ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակցից armeps համակարգով էլեկտրոնային եղանակով պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 13.07.2018թ. ներկայացնել Հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող համապատասխան փաստաթղթերը, նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում՝ մինչև 13.07.2018թ. Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Դրոթերմ» ՍՊ ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների ինչպես նաև «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

2.2 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող բոլոր փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ մինչև 13.07.2018թ. ներկայացվել է Դրոթերմ ՍՊ ընկերության կողմից /կցվում է/:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հանձնաժողովի կողմից ներկայացված թիվ 1 գնահատման թերթիկները /կցվում են/ ՝ սույն արձանագրության 2.1 և 2.2 կետերով նշված փաստաթղթերը գնահատել բավարար և «Դրոթերմ» ՍՊ ընկերությունը ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝		Գ. Խաչատրյան
անդամներ՝		Լ. Ոսկանյան
		Հ. Հարությունյան
		Ս. Դավթյան
		Ս. Պետրոսյան
քարտուղար՝		Մ. Նիկոլյան